ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 9

«01» 03 2019 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N 59 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնակարգը սահմանելու մասին» N 59 հրամանի հավելվածով սահմանված Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնակարգի 225-րդ կետում կատարել հետևյալ լրացումները՝

1) 1-ին ենթակետում «Հայաստանի Հանրապետության վարչապետի,» բառերից հետո ավելացնել «Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի,» բառերը, իսկ «նախարարների գրագրությունները» բառերից հետո ավելացնել «բացառությամբ սույն կետի 1.1 ենթակետով նախատեսված դեպքի» բառերը:

2) Լրացնել նոր՝ 1.1 կետ հետևյալ բովանդակությամբ՝

«1.1) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմից ստացված՝ անձամբ նշագրմամբ ծրարները փակ վիճակում փոխանցել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին:»:

2.Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

3.Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների և բաժինների պետերին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին:

Ա. ԴԱՎԹՅԱՆ